## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«17» ապրիլի 2023 թվականի N 38-Ն

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Գյուլագարակ համայնքի 2023թվականի տարեկան բյուջեում կատարված փոփոխությունները համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ /14/ | Դեմ (0) | Ձեռնպահ (0) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | | — | — | — |
| Օհանյան Ռուսլան | | — | — | — |
| Սարգսյան Արփա | | — | — | — |
| Նալբանդյան Նարեկ | | — | — | — |
| Մուրադյան Դավիթ | | — | — | — |
| Պառավյան Գոհար | | — | — | — |
| Այվազյան Սերյոժա | | — | — | — |
| Մարիկյան Արմեն | | — | — | — |
| Այվազյան Վրույր | | — | — | — |
| Մագթաղյան Գնել | | — | — | — |
| Քալաշյան Վարսենիկ | | — | — | — |
| Թորոսյան Հրայր | — | — | — | բացակա |
| Տոնոյան Արտյոմ | | — | — | — |
| Գրիգորյան Թամարա | | — | — | — |
| Խաչատրյան Ռոզիտա | | — | — | — |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ/

ՀՀ Լոռու մարզի

Գյուլագարակ համայնքի ավագանու

2023թ. ապրիլի 17-ի թիվ 38 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուլագարակ համայնքի բյուջեի եկամուտների այլ եկամուտներ տողում ավելացնել 4 257 000 (չորս միլիոն երկու հարյուր հիսունյոթ հազար) ՀՀ դրամ:

«Գյուլագարակի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 09-01-01 նախահաշվի 4637 / Ընթացիկ դրամաշնորհներ /հոդվածում ավելացնել 3 121 800 (երեք միլիոն մեկ հարյուր քսանմեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

«Կուրթան գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 09-01-01 նախահաշվի 4637 /Ընթացիկ դրամաշնորհի/ հոդվածում ավելացնել 1 135 200 (մեկ միլիոն մեկ հարյուր հազար երեսունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

Գյուղատնտեսություն 04-02-01 նախահաշվի 4241 /Մասնագիտական ծառայություններ/ հոդվածից պակասեցնել 230 000 (երկու հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ ավելացնել նույն նախահաշվի 4269 /Հատուկ նպատակային այլ նյութեր/ հոդված:

Ճանապարհային տրանսպորտ 04-05-01 նախահաշվի` 5112 / Շենքերի և շինությունների շինարարություն/ հոդվածից պակասեցնել 3 200 000 /երեք միլիոն երկու հարյուր հազար / ՀՀ դրամ.

Սպորտ նախահաշվի 5112 /շենքերի և շինությունների շինարարություն/ հոդվածում ավելացնել 3 200 000 (երեք միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գյուլագարակ համայնքի բյուջեի եկամուտների պետական բյուջեից տրամադրվող այլ ընթացիկ դոտացիաներ տողում ավելացնել 12 616 492 (տասներկու միլիոն վեց հարյուր տասնվեց հազար չորս հարյուր իննսուներկու )ՀՀ դրամ :

Գյուղատնտեսություն 04-02-01 նախահաշվի 4637 /Ընթացիկ դրամաշնորհներ/ հոդվածում ավելացնել 12 616 492(տասներկեւ միլիոն վեց հարյուր տասնվեց հազար չորս հարյուր իննսուներկու ) ՀՀ դրամ;

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ս. Նալբանդյան